

ՀԱՍՄԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՈՄԱՆԻՇՈՒԹՅԱՆ ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ
ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ժամանակակից լեզվաբանների մեծամասնությունը նախընտրում է հոմանիշության ոչ թե խոսքային, այլ լեզվական չափանիշները: Եվ քանի որ իմաստաբանական չափանիշները դժվար են ենթարկվում ձևայնացման, այսօր բավական տարածված է հոմանիշության բացատրությունը տրամաբանական-մաթեմատիկական հարաբերությունների հիմքի վրա: Այս ուղղության կողմնակիցները [7, 113], [5, 136-147], [9, 83] առանձնացնում են չորս տրամաբանական հարաբերություններ. նույնություն, ներառում, հատում, բացառում:

Առաջինի՝ նույնություն դեպքում, բազմության տարրերը համարժեք են, այսինքն համընկնում են: Նման հարաբերություններն առկա են այսպես կոչված բացարձակ հոմանիշներում, որոնք հազվադեպ են հանդիպում:

Մեկ բազմությունը մյուսի մեջ լիակատար ներառելու դեպքում իմաստային պլանում առաջանում են սեռանիշային հարաբերություններ (ծաղիկ-վարդ): Երբեմն այս հարաբերությունները դիտվում են որպես հոմանիշության արտահայտություններից մեկը: Սակայն տրամաբանական հարաբերությունների սկզբունքը թույլ է տալիս այդ երևույթները սահմանազատել: Հոմանիշության կառուցվածքը ներկայացվում է որպես բազմությունների հատման հարաբերություն, որտեղ առկա են նույնական տարրեր և տարբերություններ, որոնք հակադրություն են առաջացնում:

Նկատենք, որ այս նմուշօրինակին են հետևում նաև հականիշային հարաբերությունները, քանի որ հակադիր բազմությունների համեմատությունը կարելի է իրականացնել միայն որևէ ընդհանուր հիմքի վրա: Նման հարաբերությունները լեզվում ձևավորում են ծայրակից հակադրություններ: Սրանք այն հակադրություններն են, որոնց զույգ անդամները համազոր են, այսինքն որևէ հատկանիշի երկու աստիճաններ չեն, ոչ էլ որևէ հատկանիշի հաստատում կամ ժխտում [5, 136-147]:

Հակադրությունների ուսումնասիրությունը մեծ հետաքրքրություն է ներկայացնում բառապաշարային իմաստաբանության վերլուծության համար, քանի որ այն միաժամանակ նպաստում է բառապաշարային միավորների

նմանությունների և տարբերությունների բացահայտմանը: Հենց այս հակադրություններն են բնորոշ թե հոմանիշությանը, թե հականիշությանը:

Համեմատվող բառապաշարային միավորները հակադրվող այս կամ այն դասին վերագրելը թույլ է տալիս բաղադրիչների կամ իմակների վերլուծություն կատարել: Լ.Նովիկովը շեշտում է, որ հոմանիշների չհամընկնող տարբերակիչ հատկանիշները (իմակները) միմյանց չեն բացառում, այդ պատճառով էլ հոմանիշների նշանակությունները միմյանց չեն ժխտում, չեն բացառում, այլ ճշգրտում են մեկը մյուսին և, ի տարբերություն հականիշների, համապատասխանում են համատեղելի հասկացությունների. *опи́мая* *ли́мита: де́маркация, фронтієра, бо́рца, конліна*: Բոլոր այս հասկացություններում առկա են լրացուցիչ իմաստային բաղադրիչներ, որոնց օգտագործումը նեղացնում է “*ли́мита*” հասկացության իմաստը: Համատեքստում նրանք կարող են փոխարինել “*ли́мита*” բառին՝ ամեն անգամ հստակեցնելով այն:

Այսուամենայնիվ, տրամաբանական-մաթեմատիկական հարաբերությունների կիրառումը իմաստաբանության մեջ չի արտացոլում բառապաշարային բոլոր նրբիմաստները: Ինչպես նշում է Ի.Տամբա-Մեցը իր “Իմաստաբանություն” աշխատության մեջ [11.80] տրամաբանական համարժեքությունը՝ որպես մաթեմատիկական գործընթաց, հնարավոր կլիներ կիրառել պայմանական համակարգում՝ անկախ դրանից օգտվողների և գործածության պայմանների: Բառապաշարում նման համակարգի ստեղծման անհնարինությունը հաստատվում է բացարձակ ու հարաբերական, ամբողջական ու մասնակի հոմանիշների գոյության փաստով:

Իմաստային կառուցների հիմքում ընկած է նշանակությունը, իմաստը: Այդ իսկ պատճառով հոմանիշությունը հիմնվում է իմաստների նմանության վրա: Հոմանիշները դիտվում են որպես բառեր, որոնք ունեն միևնույն բառային նշանակությունը, բայց տարբերվում են իրենց նրբիմաստներով: Այս մոտեցումով՝ են առաջնորդվել լեզվաբանական տարբեր ուղղությունների և դպրոցների ներկայացուցիչները՝ Վ. Ֆոն Հոլմբոլդտը, Ա. Պոտեբյան, Չ. Օգեներ և Ա Ռիչարդսը, Վ. Բրենդալը, Ռ. Ուելսը, Մ. Պոկրովսկին և ուրիշներ [1. 216]:

Դիտարկենք այս բնորոշման առավելություններն ու թերությունները: Նշանակության վրա են շեշտը դնում նաև ֆրանսիացի լեզվաբաններ Ա. Միտտերանը [8.75] և Օ. Սովաժոն [10.76]: Սակայն նշանակության նմանությունը հոմանիշության հիմնական չափանիշ համարելուց առաջ, անհրաժեշտ է պարզաբանել, թե ինչ է բառիմաստը:

Օ. Ա. Ախմանովայի “Լեզվաբանական տերմինների բառարանում” նշանակությունը դիտվում է որպես իրականության արտացոլում, որն ընդգրկվում է

բառի կառուցվածքի մեջ որպես նրա ներքին կողմը (այն հակադրվում է նյութական թաղանթին):

Նշանակության կազմի և բնույթի վերլուծության ժամանակ լեզվաբան-ների կարծիքները բախվում են: Յու.Ստեպանովը և Ռ.Բուդագովը առաջարկում են նշանակություն համարել բառի և առարկայի կապը: Բայց լեզվաբանների մեկ այլ խումբ (Վ.Պանֆիլով, Ա.Սմիռնիցկի, Դ.Շմելյով) նկատում են, որ այդ դեպքում բոլոր բառերը կունենան մեկ նշանակություն: Այս կամ այն բաղադրիչի գերակայությունից կախված, բառիմաստը կարող է լինել տրամաբանական-գոյականական, զգացական, և կամ արտահայտել երկու բաղադրիչները միաժամանակ [4, 28-35]:

Միևնույն նշանակություն արտահայտող բառերը կարող են պատկանել տարբեր գործառական ոճերի, որն էլ թույլատրում է առանձնացնել բառի ոճաբանական բաղադրատարրը: Հասկացությունները և հուզական նրբերանգները կարող են հակադրվել զուգորդելիությանը և ոճային պատկանելիությանը այն առումով, որ առաջինները արտացոլում են արտալեզվական իրականությունը, իսկ վերջինները՝ ներլեզվականը:

Ի. Ա. Ստեռնինը [6, 26] նշանակության կառուցվածքում առանձնացնում է չորս բաղադրիչ՝ հիմնանշանակային (denotatif), հարանշանակային (հավելիմաստային, նշանակցական - connotatif), էմաիոնիկ և ընտրութային:

Բառի ոչ էմպիրիկ նշանակության հիմնական բաղադրիչները հիմնանշանակային և հարանշանակային են: Հիմնանշանակային բաղադրիչը նշանակության առարկայատրամաբանական մասն է, որի հիմքը հասկացությունն է: Իսկ հարանշանակային բաղադրիչին Ի.Ստեռնինը միացնում է զգացմունքային, գնահատողական, արտահայտչական և ոճական միկրոբաղադրիչները: Էմպիրիկ և հիմնանշանակային բաղադրիչները արտացոլում են իրականությունն անմիջականորեն, իսկ հարանշանակայինը՝ ավելի սուբյեկտիվ է, քանի որ իր մեջ պարունակում է գնահատողական տարր:

Զորրորդ բաղադրիչը՝ ընտրութայինը, արտացոլում է բառիմաստի ճիշտ գործածությունը լեզվում: Այն, ի տարբերություն մյուս երեք բաղադրիչների արտացոլում է լեզվական իրականությունը: Ընտրութային բաղադրիչը մասնակցում է հաղորդակցման գործընթացին՝ չփոխանցելով ինքնուրույն տեղեկատվություն (ինֆորմացիա):

Վերլուծելով բառիմաստի կառուցվածքը, Վ. Գ. Գակն առանձնացնում է բուն իմաստաբանական (նշանակիչ և նշյալ), բառի ներքին ձևի (հատկանիշ դրված անվանման հիմքում), գործաբանական (հուզարտահայտչական երանգ և նշանակցում) և շարահյուսական հայեցակերպերը:

Վերոհիշյալ տեսակետների համադրումը մեզ թույլ է տալիս հանգել հետևյալ եզրակացությանը. բառիմաստի կառուցվածքի ըմբռնման համար անհրաժեշտ է առանձնացնել հասկացական-տրամաբանական միջուկը, հուզարտահայտչականությունը, ոճաբանական և ընտրութային հայեցակերպերը, որոնք կարող են դրվել հոմանիշության իմաստաբանական չափանիշների որոշարկման հիմքում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Апресян Ю. Д. Интегральное описание языка и системная лексика – М. 1995.
2. Апресян Ю. Д. Лексическая семантика: синонимические средства языка – М. Школа 1995.
3. Гак В. Г. Языковые преобразования – М. Школа. Языки Русской культуры 1998.
4. Лопатникова Н. Н., Монинович Н. А. Лексикология современного французского языка – М. Высшая школа, 2000.
5. Поников, Л. А. Семантика русского языка – М. Высшая школа 1982.
6. Стернин Н. А. Проблемы анализа структуры слова – Воронеж. Издательство Воронежского Университета. 1979.
7. Martin R. Inference, antonymie et paraphrase. – Paris, Librairie Klincksieck, 1976.
8. Mitterand H. Les mots français. – Paris 1996.
9. Rey-Debove J. La linguistique du signe. – Paris, Ed. Armand Colin 1998.
10. Sauvageot A. Portrait du vocabulaire français. – Paris, Larousse, 1964.
11. Tamba-Mecz J. La sémantique. – Paris, 1989.